Ս.ՇՏԻԿՅԱՆ

ՈՐՏԵՂ ԷՐ ԲԱՆՏԱՐԿՎԱԾ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԸ

Առաջին հայացքից՝ տարօրինակ և նույնիսկ ծիծաղելի թվացող հարցադրում։ Հանրահայտ է, որ Միքայել Նալբանդյանը բանտարկված էր Ալեքսեևյան ռավելինում (Պետրոպավլովսկի բանտ), որտեղ նա բերվեց 1862 թ, հուլիսից և որտեղ անցկացրեց մոտ երեք տարի։ Այսպես է ասվել ու գրվել բազում անգամներ, ընդհուպ մինչև մեր օրերը (տես, օրինակ, Ա. Ինճիկյան, «Նալբանդյանի ,,, տարեգրությունը», Երևան, 1954, էջ 215)։ Սակայն այստեղից էլ ծայր է առնում մի փոքրիկ թյուրիմացություն։ Բանն այն է, որ «Ալեքսեևյան ռավելին» անվան ներքո հասկացվել ու հասկացվում է Պետրոպավլովլովսկի բանտի մի ամբողջ մասը, նրա մի շրջանը, ճիշտ այնպես, ինչպես բանտի մի ուրիշ շրջանը կոչվում էր «Աննա Իոանովնայի անվան ռավելին»։ Բանտի՝ Նևայի վրա նայող մի հատվածը ուներ «Մենշիկովի բաստիոն» անվանումը, մի այլ շրջանը կոչվում էր «Եկատերինյան ամրափակ» և այլն։ Մեզ հետաքրքրող «Ալեքսեևյան ռավելինը» (այսպես է կոչվել ի պատիվ Պետրոս Ի-ի հոր՝ Ալեքսեյ Միխայլովիչ թագավորի), – սրածայր մի շինություն էր, իր մեջ ներառնում էր ներքին կարիքների հետ կապվող մեկից ավելի հաստատություններ (ջրաբաշխիչ երկու կայան, զորանոց, խոհանոց, պահեստ և այլն), և, մեզ համար կարևորը, սկզբնական շրջանում չուներ ոչ մի բանտ։

Այս դեպքում ինչպես պետք է հասկանալ Նալբանդյանի մասին վերևում ասվածը։

Իր կայսրության հյուսիսային սահմանները պաշտպանելու նպատակով հիմնադրելով, Պետրոպավլովսկ բերդը (1703 թ., մայիսի 16), Պետրոս Ի-ը այն «շահագործման հանձնելուց» քիչ հետո նկատեց, որ «Սանկտ-Պիտերբուխը» (այդպիսին էր Պետրոպավլովսկի սկզբնական անունը) շատ էլ համապատասխան չէր այն կոչմանը, որի համար նախորոշված էր։ Այդ պատճառով էլ բերդն արագ կերպով վերակառուցվեց պատժավայրի, քաղաքական առավել վտանգավոր հանցագործների համար։ Առաջին աշխատանքները ծայր առան Ալեքսեևյան ռավելինի ներսում։ 1897 թվականին այստեղ կառուցվեց առաջին բանտը, որը պաշտոնապես ստացավ «Գաղտնի տուն» անունը։ Տասնվեց մենախուց ունեցող «Գաղտնի տունը» կառուցված էր բանտարկյալներին տանջելու համար այնպիսի չգերազանցված «հարմարություններով», որի նմանը դժվար էր երևակայել անգամ։ Եթե ասենք միայն, որ այնտեղ բանտարկվածների անունները խստիվ գաղտնի էին և ամբողջ Ռուսական կայսրության մեջ հայտնի էին միայն երեք մարդու (Պետրոպավլովսկի բանտապետ, երրորդ բաժանմունքի պետ և թագավոր), և եթե մեջբերենք բանտարկյալների՝ իրենց մասին ասված դաժան սրամտությունը, - «Գաղտնի տնից» միայն երեք ելք կա՝ գերեզմանոց, հոգաբուժական հիվանդանոց և տաժանակրություն, – ապա համապատասխան մեկնաբանություններն արդեն ավելորդ կլինեն։

Սակայն Պետրոպավլովսկի բերդի՝ ավելի ու ավելի կատարելագործված բանտ դառնալու հանգամանքը մի կողմից և «Գաղտնի տան» աստիճանաբար հնանալու և խարքլվելու փաստը մյուս կողմից, վերջինիս քանդելու հրամայական պահանջ դրեցին ղեկավարության առջև։ 1884 թվականին «Գաղտնի տունը» քանդվեց, իսկ մի քանի տարի անց, հողով ծածկվեց այն ջրանցքը, որն աղեղի ձևով եզերում էր ամբողջ շինությունը։

Արդ՝ քննությունը ցույց է տալիս, որ Միքայել Նալբանդյանը բանտարկված է եղել Ալեքսեևյան ռավելինի ներսում գտնվող «Գաղտնի տանը» (և ոչ թե ամբողջ ռավելինում, որն անկարելի էր), քաղաքական առավելապես վտանգավոր տանցագործների համար նախատեսված այդ տաժանարանում։

Այստեղից բխում է երկու կարևոր հետևություն։

Բազմիցս գրվել է, որ Նալբանդյանը 1864 թ. նոյեմբերից փոխադրվել է այդ բանտի 17-րդ խուցը՝ նախկին 14-ից, որտեղ և մնացել է մինչև բանտից դուրս գալը (1865 թ., մայիս)։ Վերևում արդեն ասացինք, որ «Գաղտնի տունը» ուներ ընդամենը 16 խուց, հետևաբար այս պնդումը վերանայման կարիք ունի։

1862 թ. հուլիսին ձերբակալվում և «Գաղտնի տուն» է բերվում Չերնիշևսկին, որն այդտեղ է մնում ամբողջ երկու տարի, մինչև 1864 թվականի մայիսը։ Ռուս և հայ քաղաքական երկու ականավոր գործիչներն, այսպիսով, կողք-կողքի մոտ երկու տարի բանտարկված են եղել նույն բանտում։ Չի կարելի ենթադրել, որ հենց «Գաղտնի տունն» է եղել այն վայրը, որտեղ հանդիպել են իրար Նալբանդյանն ու Չերնիշևսկին, մի հանդիպում և մի ծանոթություն, որը վաղուց ի վեր գայթակղության քար է հանդիսանում նալբանդյանագետների համար։

Երեկոյան Երևան, 1971, № 228,

հոկտեմբերի 1